Արձանագրություն N 2

«ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ -ի կարիքների համար ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Ք.Երևան

13 հոկտեմբերի 2025թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հարությունյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Այդինյան, Խ.Նազարեթյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Մկրտչյան

1. *Տեղեկություններ հայտերի բացման մասին*

Հայտերը բացվել են հրավերի հրապարակման օրվան հաջորդող 7-րդ օրը, Պ.Սևակի 5/2 հասցեով, ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը և հեռախոսահամարը	Էլ. փոստ	ՀՎՀՀ
1	«ԻՄՄՈՒՆՈՖԱՐՄ » ՍՊԸ	Ք.Երևան, Ներսիսյան 10-1/3 Հեռ.010 240-840	tender@immunofarm.net	00650292
2	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	Ք.Երևան, Ազատության 26/8 Հեռ. 011 87-87-17	lawyer@c-e.am	01210095
3	« ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊԸ	Ք.Երևան, Լենինգրադյան փ., 23/2, 79 բն. Հեռ. 095 54-30-78	pprimalab@gmail.com	08256775
4	«Վիոլա» ՍՊԸ	Ք.Երևան, Գյուրջյան փ. 17շ, 91 տարածք Հեռ. 010 64-00-84	viola.diag@gmail.com	00801026

Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

3. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման բացակայության վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

4. Տվյալներ՝ հայտերի կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված փակ, կնքված ծրարում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են : Հայտերի բացման և գնահատման ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Վիոլա» ՍՊԸ -ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ վերջինիս ներկայացված հայտի Հավելված 1.1-ում հստակեցված չեն առաջարկվող ապրանքի ֆիրմայի անվանումը, ապրանքային նշանը, մոդելը, արտադրողի անվանումը:

5. Հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.22017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Վիոլա» ՍՊԸ -ին սահմանված ժամկետում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

5.2 Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակել 29.09.2025թ. ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

29.09.2025թ. ժամը 14:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

6. Ընդունել ի գիտություն

6.1 Սահմանված ժամկետում Մասնակիցը էլեկրոնային փոստի միջոցով ուղարկել է Հավելված 1.1-ը՝ լրացնելով «ապրանքի ֆիրմայի անվանումը», «ապրանքային նշանը», «մոդելը», «արտադրողի անվանումը» դաշտերը , որը տրամադրվել է գնահատող հանձնաժողովին:

6.2 Գնահատող հանձնաժողովը գնահատման արդյունքում ուսումնասիրելով **BA1204C** մոդելի կշեռքն արտադրող ընկերության կայքում բաց հասանելի տեղեկատվությունը պարզեց, որ Մասնակցի կողմից ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջարկած **BA1204C** մոդելի կշեռքի բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ կայունացան ժամանակը նշված է 6 վ, իսկ պահանջվում է 2 վ, որը տվյալ սարքի միջոցով գիտական արդյունքի ստացման համար խիստ կարևոր ցուցանիշ է:

6.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.22017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, այն է՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե **դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան**», «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

Չ/հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումը	Նախահաշվային գին	Գնի առաջարկները (ՀՀ դրամ)		Ընտրված մասնակից «Х»
				Գինը առանց ԱԱՀ	Ընդհանուր գինը	
1	Անալիտիկ կշեռք ներքին աստիճանավորմամբ	« ԻՄՄՈՒՆՈՖԱՐՄ » ՍՊԸ	1500000	995000	1194000	Х
		«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ		1000000	1200000	
		« ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊԸ		1057500	1269000	
		«Վիոլա» ՍՊԸ		440000	528000	Հրավերի պահանջներին չբավարարող հայտ

8. Հանձնաժողովը որոշեց՝

1. ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել « ԻՄՄՈՒՆՈՖԱՐՄ » ՍՊԸ -ին, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2. Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել **տաս օր անգործության ժամկետ**: Անգործության ժամկետի լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդ.-ի 1-ին մասի 3-րդ կետերի համաձայն ՔՖԻ-ԳՀԱՊՁԲ-25/64 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա.Հարությունյան

Անդամներ՝ Ս.Այդինյան

Խ.Նազարեթյան

Քարտուղար՝ Մ.Մկրտչյան